ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի սեպտեմբերի 22-25-ը Վիլնյուս (Լիտվայի Հանրապետություն)՝ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Աննա Մազմանյանի գործուղման վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Աննա Մազմանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Վիլնյուս (Լիտվայի Հանրապետություն)

2021թ. սեպտեմբերի 22-25-ը

3. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Լիտվայի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության բնապահպանական ծրագրերի կառավարման գործակալություն

5, ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն «Ապակյա և պլաստիկ թափոնների կայուն կառավարման համակարգի զարգացում» ծրագրի շրջանակներում կազմակերպված ուսուցողական այցին:

6, ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը իմ գլխավորությամբ, հայ-լիտվական համագործակցության շրջանակներում, Լիտվայի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության բնապահպանական ծրագրերի կառավարման գործակալության հրավերով մասնակցում էր «Ապակյա և պլաստիկ թափոնների կայուն կառավարման համակարգի զարգացում» ծրագրի ներքո կազմակերպված այցի ընթացքում ներկայացվել է ապակե և պլաստիկ տարաների դեպոզիտային (վերադարձման) համակարգի լիտվական առաջադեմ փորձը, գործող համակարգի սկզբունքներն ու մեխանիզմները:

Վիլնյուս քաղաքի առևտրի կենտրոններից մեկում պրակտիկ ներկայացվել են ապակե, պլաստիկ և ալյումինե տարաների վերադարձման բուն գործընթացը, պիտակավորման և մակնշման հետ կապված իրավակիրարկումը, գների ձևավորման մեխամիզմը:

Այցի ընթացքում պատվիրակությունը, որի կազմում ընդգրկված էին նաև տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, էկոնոմիկայի նախարարությունների և Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչներ, այցելել է դեպոզիտային համակարգի ադմինիստրատորի և հաշվարկային կենտրոն՝ տեղում ծանոթանալով դեպոզիտային (վերադարձման) համակարգի միջոցով արդեն իսկ

հավաքագրված տարաների տեսակավորման և պահեստավորման գործընթացին, ներկայացվել են վերջիններիս հետագա վերամշակման ուղիները, մեթոդները: Ներկայացվել են կենտրոնի կողմից հավաքագրվող տարաների հավաքագրման և վերամշակման ծավալների վերաբերյալ արդյունքային ցուցանիշները՝ համակարգի ներդրման 5 տարիների կտրվածքով:

Կենտրոնում կայացել է աշխատամնքային հանդիպում Լիտվայի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի տեղակալ տիկին Ռամիտա Ռադավիչիենեի և բնապահպանական ծրագրերի կառավարման գործակալության պետի տեղակալ տիկին Դանուս Կազլաուսկասի հետ: Քննարկվել են «Ապակե և պլաստիկ թափոնների կայուն կառավարման համակարգի զարգացում» ծրագրի շրջանակներում իրականացված և իրականացվելիք աշխատանքները, դեպոզիտային համակարգի լիտավական առաջադեմ փորձի հետագա ներդրման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև հայ-լիտվական համագործակցության ընդլայնման հնարավորությունները և մի շարք այլ հարցեր:

Կազմակերպվել է նաև այց Ալիտուսի թափոնների կառավարման տարածաշրջանային կենտրոն, որտեղ արդյունքային ցուցանիշների հիման վրա ներկայացվել են դեպոզիտային համակարգից զատ գործող թափոնների կառավարման տարածաշրջանային համակարգը, գործող մեխանիկական ու կենսաբանական մաքրման կայանները, համակարգի արդյունավետությունը:

7, ԱՐԴՅՈՒՆՔԸ

ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 3-րդ հավելվածի համաձայն հայկական կողմը պարտավորություն է ստանձնել ներդնել թափոնների կայուն կառավարման և արտադրողների ընդլայնված պատասխանատվության մեխանիզմները՝ իրականացնելով համապատասխան օրենսդրական մոտարկումներ՝ ԵՄ 2008/98/ԵՀ թափոնների մասին հրահանգի պահանջներին համապատասխան: ՀՀ-ում ապակյա և պլաստիկ տարաների դեպոզիտային (վերադարձման) համակարգի ներդրման գործընթացը հանդիսանում է վերոնշյալ պարտավորության բաղադրիչ: Այցի արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել շրջակա միջավայրի պահպանության և կառավարման ոլորտում հայ-լիտվական երկկողմ համագործակցության շրջանակներում հետագա քայլերի շուրջ: Ստեղծվել են նախադրյալներ ՀՀ-ում ապակյա, պլաստիկ և ալյումինե տարաների դեպոզիտային (վերադարձման) համակարգի ներդրման համար՝ կիրառելով լիտվական առաջադեմ փորձը:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

Recoverable Signature

X

ԱՆՆԱ ՄԱԶՄԱՆՅԱՆ

Signed by: MAZMANYAN ANNA 5308800774 Աննա Մազմանյան